ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-18/06-104-2018

ք. Երևան ,01 Հոկտեմբեր 2018 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխակազմի ղեկավար Վ. Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,Դաշա ե ՍՊԸ ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ի. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սպորտային միջոցառումների կազմակերպում/** ,Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատությունե մրցույթի անցկացումե ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ

որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված --- աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3578.0 (երեք միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ, Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից

ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011010924 ՀՎՀՀ 02586282	, Դաշա ե ՍՊԸ ք. Երևան, Գուլակըան փող. 28 ,ԻնեկոբանկԵՓԲԸ Հ/Հ 205062206656 ՀՎՀՀ 00138727
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան	Տնօրեն՝ Ի.Հակոբյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«01» Մարտի 20 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/06»-109-2018 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	92621110	**« Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն » միջոցառման անցկացմուն» ծառայությունների ձեռքբերում** 1. «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» 2018 թվականի մրցույթի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բնակչության սոցիալական պաշտպանության երեխաների ընդհանուր տիպի, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) երեխաների շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացումը: 2, Խնդիրներն են՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնարավորությունների օգտագործում երեխաների դաստիարակության և առողջության ամրապնդման գործընթացում: Հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դերի կարևորում, ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպում: **Մրցույթն անցկացվելու է երկու փուլով.** Առաջին փուլի համար ծառայության մատուցման անհրաժեշտություն չկա: Երկրորդ՝ եզրափակիչ փուլ (հանրապետական)՝ 2018 թվականի ապրիլի 26-ից 27-ը Վանաձոր քաղաքում, որի անցկացման համար անմիջական պատասխանատվությունը կրում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության: Մրցույթին մասնակցելու են Հայաստանի Հանրապետության **12** հաստատություններ: Մրցույթի անցկացման նախատեսված է՝ • Մարզադահլիճի վարձակալում և ձևավորում Վանաձորի մարզադահլիճում: **(1 օր)**	դրամ	3578000	1	Ք. Վանաձոր	26-27.04.2018 թ

Մրցավարների համար մարզահագուստ
բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության
իրավունքով): **(10 հատ՝ -4-հատ Մ, 3-ական, L, XL)**
Միջոցառման ավարտին ճայթռուկ (հրավառություն՝ 6 կետից)
ծառայության մատուցում, մարզադահլիճում
Մարզական միջոցառման ծրագիրը ներառում է՝

Վարժություն N 1. խաղային փոխանցավազք
ՎարժությունN 2. Փոխանցավազք արգելքների հաղթահարումով
Վարժություն N 3 Փոխանցավազք մարմնամարզական օղակներով
Վարժություն N 4 Խաղային փոխանցավազք՝
Վարժություն N 5 ,Օլիմպիական խորհրդանիշի հավաքումե

Որոնց համար անհրաժեշտ մարզագույքն է՝
Վայրկյանաչափ էլեկտրոնային,
պլաստմասսե հումքից մրցումային և մարզումային
ստանդարտներին համապատասխան պլաստմասսե
պատյանով. **(3 հատ)**
Բասկետբոլի գնդակ՝ կաշվե կամ փոխարինող
հումքից, N 5-6 **(4 հատ)**
Մարմանամամարզական մեծ փուչիկ՝ ՝
տրամագիծ 55-65 սմ, բռնակով, ռեզինե հումքից:
(6 հատ)
Օլիմպիական խորհրդանշի ստենդ՝
չափսը՝ 110x65 սմ,(սպիտակ կամ մոխրագույն), ամրացված մետաղե կանգնակներին, ընդհանուր բարձրությունը 130 սմ, պատրաստման աշխատանքները համաձայնեցնելով նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ
(3 հատ)
Օլիմպիական գունավոր օղակներ՝ տրամագիծը 30 սմ
պլաստմասե հումքից, 1.5-2.0 սմ հաստությամբ,գույները՝ սև, կարմիր, կապույտ, կանաչ, դեղին յուրաքանչյուրից 4 ական:
(15 հատ)
Մրցույթին 1-ին,2-րդ և 3-րդ տեղեր գրաված թիմերին և թիմերի անդամներին պարգևատրման համար անհրաժեշտ են՝
ՀՀ Նախագահի վկայագիր. չափսը՝ 30 x 20 սմ,
թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ **(3 հատ)**
Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի
(3 հատ)
Հավաստագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե,
օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ
Տեքստը համաձայնեցնել նախարարության
աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ **(36 հատ)**
Շնորհակալագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե,
օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ Տեքստը
համաձայնեցնել նախարարության աշխատակազմի

ՄՍՖԴՔ վարչության հետ (**9 հատ**)

Մեդալներ. չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից, (1-ին, 2-րդ և 3րդ տեղ) (3x12=36 **հատ**)

Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝ 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով՝ վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ (**3 հատ**)

Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, սպորտային վերնազգեստ և տաբատը՝ եզրագծված, գույնը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով) (**60**-ական **9-10** և **11-12** տարեկան երեխաների համար ընդամենը՝ **120 հատ**)

1-ին տեղը գրված հաստատությանը՝

Մարմնամարզական պատ՝ փայտից 10 աստիճան (5 սմ տրամագծով), 250սմ բարձրությամբ, 75-80 սմ լայնությամբ, կողային պատի լայնությունը առնվազն 13 սմ, իսկ վերին ձգման համար հարմարեցված 20 սմ հատվածը՝ 22 սմ լայնությամբ, թույլ լաքապատված (**2 հատ**)

Գնդակ ֆուտբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից (**6 հատ**)

Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից (**6 հատ**)

Գնդակ բասկետբոլի,՝ Արհեստական կաշվից, չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար, № 5-6, (**6 հատ**)

Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ (**1 հատ**)

Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ պատրաստված փայտից, երեսեպատված ռետինե ծածկով (**4 զույգ**)

Դարթս՝ պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախըբաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից (**4 հատ**)

Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե, բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ,
իր տուփի մեջ, մրցումային և մարզումային
ստանդարտներին համապատասխան **(6 հատ)**

Ֆիշկա (գուրզեր). բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասսե հումքից **(10 հատ)**

Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից,
տրամագիծը 90-100 սմ **(8 հատ)**

Բադմինտոն. նյութը՝ գրաֆիտ-կարբոն,ցանցի գործվածքը ՝ սինթետիկ թելից **(3 զույգ)**

Պարան՝ երկարությունը 25-30 մ, հաստությունը
2,5-3 սմ, վուշե հումքից պատրաստված **(1 հատ)**

Պարան մագլցման. բամբակի և կապրոնի համակցությունից, 6 սմ տրամագծով, 4.5-4.6 մ երկարությամբ, վերին մասում առաստաղին ամրացվող հարմարանքով, մարզումային ստանդարտներին համապատասխան **(1 հատ)**

Բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց
չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1 հատ)

Ցատկի պարկ՝ Կիսասինթետիկ կտորից, 1.00 մ * 60 սմ-ի չափի
(10 հատ)

2-րդ տեղը գրաված հաստատությանը՝

Մարմնամարզական պատ՝ փայտից 10 աստիճան (5 սմ տրամագծով), 250սմ բարձրությամբ, 75-80 սմ լայնությամբ, կողային պատի լայնությունը առնվազն 13 սմ, իսկ վերին ձգման համար հարմարեցված 20 սմ հատվածը՝ 22 սմ լայնությամբ, թույլ լաքապատված **(1 հատ)**

Գնդակ ֆուտբոլի՝ կաշվե կամ փոխարինող
հումքից **(5 հատ)**

Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից **(5 հատ)**

Գնդակ բասկետբոլի,՝ Արհեստական կաշվից,
չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ
դահլիճներում օգտագործելու համար, № 6, **(5 հատ)**

Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ
բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ **(1 հատ)**

Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ պատրաստված
փայտից, երեսեպատված ռետինե ծածկով **(3 զույգ)**
Դարթս ՝պատրաստված է խտացված բուսական
մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը
բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են
1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է
մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից **(3 հատ)**
Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե,
բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ,
իր տուփի մեջ, մրցումային և մարզումային
ստանդարտներին համապատասխան **(5 հատ)**
Ֆիշկա (գուրզեր). բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասսե հումքից
(8 հատ)
Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից,
տրամագիծը 90-100 սմ **(6 հատ)**
Բադմինտոն. նյութը՝ գրաֆիտ-կարբոն,ցանցի գործվածքը ՝ սինթետիկ
թելից **(2 զույգ)**
Պարան՝ երկարությունը 25-30 մ, հաստությունը
2,5-3 սմ, վուշե հումքից պատրաստված **(1 հատ)**
Պարան մագլցման. բամբակի և կապրոնի համակցությունից, 6 սմ տրամագծով, 4.5-4.6 մ երկարությամբ, վերին մասում առաստաղին ամրացվող հարմարանքով, մարզումային ստանդարտներին համապատասխան **(1 հատ)**
Բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց
չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1 հատ)
Ցատկի պարկ՝ Կիսասինթետիկ կտորից, 1.00 մ * 60 սմ-ի չափի
(8 հատ)

3-րդ տեղը գրաված հաստատությանը՝

Մարմնամարզական պատ՝ փայտից 10 աստիճան (5 սմ տրամագծով), 250սմ բարձրությամբ, 75-80 սմ լայնությամբ, կողային պատի լայնությունը առնվազն 13 սմ, իսկ վերին ձգման համար հարմարեցված 20 սմ հատվածը՝ 22 սմ լայնությամբ, թույլ լաքապատված
(1 հատ)
Գնդակ ֆուտբոլի՝ կաշվե կամ փոխարինող
հումքից **(3 հատ)**
Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից **(3 հատ)**
Գնդակ բասկետբոլի,՝ Արհեստական կաշվից,
չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ
դահլիճներում օգտագործելու համար, № 6 **(3 հատ)**
Վոլեյբոլի ցանց՝ Ցանցի բարձրությունը 1մ լայնությունը 9.5-10մ: Վերին եզրը 7սմ բարձրությամբ իսկ ստորին եզրը 5 սմ բարձրությամբ ժապավեններով սահմանազատված: Վերին ժապավենի միջով անցկացված 4մմ հաստությամբ առնվազն 15մ երկարությամբ պողպատե ճոպանով, ներքևի ժապավենի միջով՝ ստորին եզրը ձգելու պարանով, գործվացքը 10x10 սմ անցքերով, սև գույնի սինթեթիկ

մանրաթելերից գործված 2-3մմ հաստությամբ թելից: Ցանցի ծայրերում իրարից 9մ հեռավորության վրա տեղադրված են 1մ բարձրությամբ և 5 սմ լայնությամբ դաշտի սահմանները եզրագծող ժապավեններ
(1 հատ)
Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ պատրաստված
փայտից, երեսեպատված ռետինե ծածկով **(2 զույգ)**

Դարթս՝ պատրաստված է խտացված բուսական
մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը
բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են
1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է
մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից **(2 հատ)**
Ցատկապարաններ. պարանը՝ ռետինե,
բռնիչները՝ պլաստմասսե, 2-2,5 մետր երկարությամբ,
իր տուփի մեջ, մրցումային և մարզումային
ստանդարտներին համապատասխան **(4 հատ)**
Ֆիշկա (գուրզեր). բարձրությունը 30 սմ, կոնաձև, պլաստմասսե
հումքից **(6 հատ)**
Մարմանմարզական օղակներ՝այլումինե հումքից,
տրամագիծը 90-100 սմ **(4 հատ)**
Բադմինտոն. նյութը՝ գրաֆիտ-կարբոն,ցանցի գործվածքը՝ սինթետիկ
թելից **(2 զույգ)**
Պարան՝ երկարությունը 25-30 մ, հաստությունը
2,5-3 սմ, վուշե հումքից պատրաստված **(1 հատ)**
Պարան մագլցման. բամբակի և կապրոնի համակցությունից, 6 սմ տրամագծով, 4.5-4.6 մ երկարությամբ, վերին մասում առաստաղին ամրացվող հարմարանքով, մարզումային ստանդարտներին համապատասխան **(1 հատ)**
Բասկետբոլի վահան՝ օրգանական ապակուց
չապսը՝80-60, լրակազմ (զամբյուղ, ցանց)
(1 հատ)
Ցատկի պարկ՝ Կիսասինթետիկ կտորից, 1.00 մ * 60 սմ-ի չափի
(6 հատ)

Եզրափակիչ փուլում 4-12-րդ տեղերը

գրաված հաստատություններին մարզագույք. հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով.
Գնդակ ֆուտբոլի՝ կաշվե կամ փոխարինող
հումքից, **(2x9=18 հատ)**

Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե կամ փոխարինող հումքից
(2x9=18 հատ)
Գնդակ բասկետբոլի՝ կաշվե կամ փոխարինող
հումքից, N 5-6 **(2x9=9 հատ)**
Սեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝

		պատրաստված փայտից, երեսեպատված ռետինե ծածկով (2x9=18 **զույգ)** Բադմինտոն. նյութը՝ գրաֆիտ-կարբոն, ցանցի գործվածքը՝ սինթետիկ թելից **(2x9=18 զույգ)** Դարթս՝ պատրաստված է խտացված բուսական մազաթելերից կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների, որոնց վրա գրանցված են 1-ից 20 թվերը, նետի ծայրամասը պատրաստված է մետաղե ասեղից, իրանը՝ պլաստմասսայից **(1x9=9 հատ)** **Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքները ապահովելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներն են՝** Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի (**3 հատ**) Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար (**20 հատ**) Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ (**100 հատ**) Գունավոր ժապավեն սինթետիկ հումքից, գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ (տարբեր գույների) (**150 մետր**) Կպչուն ժապավեն (սկոչ) **(3 հատ)** Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ, գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ (**5 հատ)** Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ (**2 հատ**) Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի (**4 հատ)** Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափսերի (**10 հատ**) Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ (**10 հատ)** Ապակարիչ. գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար (**1 հատ)** Վերը նշված գույքը մրցավայր տեղափոխելու համար անհրաժեշտ են տրանսպորտային միջոց **(1 բեռնատար մեքենա)**					

*Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը

** 2-րդ՝ եզրափակիչ փուլի անհրաժեշտ գույքը (պարգևատրման) Կատարողը հասցնում է ք. Վանաձոր (ժամկետները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ):

*** Եզրափակիչ փուլին՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր, իրականացնում է բոլոր կազմակերպչական և դահլիճի ձևավորման աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:

Մրցույթի եզրափակիչ փուլի ավարտից հետո Պատվիրատուն տրամադրում է Կատարողին պարգևատրվողների ցանկը, որի հիման վրա նա ծառայության համար անհրաժեշտ մարզագույքը, նվերները, հավաստագրերը. գավաթները տրամադրում է մասնակից թիմերին, պարգևատրման ցանկի համապատասխան կազմում է նվերների և գույքի բաշխման ցուցակներ, որոնք հետագայում կազմում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011010924 ՀՎՀՀ 02586282	, Դաշա ե ՍՊԸ ք. Երևան, Գուլակըան փող. 28 ,ԻՆԵԿՈԲԱՆԿԵՓԲԸ Հ/Հ 205062206656 ՀՎՀՀ 00138727
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն՝ Ի.Հակոբյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
ՍՊ-ԳՀԾՁԲ-18/06-104-2018 01 [illegible] 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

Ծառայության															
իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ/ Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն միջոցառման անցկացումն /		3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0	3578.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011010924 ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

, Դաշա Ե ՍՊԸ
ք. Երևան, Գուլակյան փող. 28
ԻՆԵԿՈԲԱՆԿԵՓԲԸ
Հ/Հ 205062206656
ՀՎՀՀ 00138727

Տնօրեն` Ի.Յակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
. 04 03 2018 թ. կնքված
,ՍՊ-ԳՅԾՁԲ-18/06~~Ե~~ ծածկագրով պայմանագրի
104-2018

Պայմանագրի կողմ
, Դաշա և ՍՊԸ
ք. Երևան, Գուլակյան փող. 28
ԻնեկոբանկԵՓԲԸ
Հ/Հ 205062206656
ՀՎՀՀ 00138727

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010924

ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,________________ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ ,____ե ,________________ե 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
______________________	______________________
ստորագրություն	ստորագրություն
______________________	______________________
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
, ե ---------- 2018 թ. կնքված
,ՍՊ-ԳՀԾՁԲ -18/06ե ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն